

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀՀ-ԲՄԱՇՁԲ-22/1-1**

ք. Երևան

«13» դեկտեմբեր 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուտաընկերություն» ՓԲ ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն՝ Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Երկնաքեր» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ս. Դրմոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **«Երևան ստուդիա» մ/շ-ի առաջին հարկի վերակառուցման և վերահատակագծման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Պայմանագիրը կնքելուց հետո 8 ամսվա ընթացքում:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազոնի ասլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.13 երկու աշխատանքային օր առաջ ներկայացնել իր ընկերության այն աշխատողների ցուցակը, ովքեր մուտք են գործելու ընկերության տարածք:

3.4.14 Աղմկոտ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն միայն ժամը 22:00- ից մինչև առավոտյան ժամը 10:00:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

4.7 Սույն պայմանագրի 4.1 կետում նշված հանձնման-ընդունման արձանագրության հաստատման օր է համարվում պատվիրատուի կողմից էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատվելու օրը:

ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող կազմակերպությունների համար Ապրանքի մատակարարման օր է հանդիսանում ներմուծվող ապրանքների ՀՀ մաքսային տարածքը հատելու օրը, որը սահմանվում է ապրանքները մաքսագերծելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում հաստատված հանձնման-ընդունման արձանագրությամբ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 135 977 520 /մեկ հարյուր երեսունհինգ միլիոն ինը հարյուր յոթանասույնյոթ հազար հինգ հարյուր քսան/ ՀՀ դրամ, որից 22 662 920 քսաներկու միլիոն վեց հարյուր վաթսուներկու հազար ինը հարյուր քսան/ ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին: Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուի ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախ. միջանցիկ ծածկագիր՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Չ/Մ	Ընդհանուր գինը/Հ դրամ	Ընդհանուր քանակ	Մատակարարում		
							Հասցե	Ենթակաքանակ	Ժամկետներ
1.	45261167/1	«Երևան ստուդիա» մ/շ-ի առաջին հարկի վերակառուցում և վերահատակ ազծում	«Երևան ստուդիա» մ/շ-ի առաջին հարկի վերակառուցում և վերահատակ ազծում /կից ֆայլերում նախագծահաշվարկային փաստաթղթերը: Աղմկոտ շինարարական աշխատանքները պետք է իրականացվեն միայն ժամը 22:00- ից մինչև առավոտյան ժամը 10:00:	դրամ	135 977 520	1	Ք. Երևան Գ. Հովսեփյան 26	1	Պայմանագիրը կնքելուց հետո 8 ամսվա ընթացքում

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
«ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Հայաստանի հանրային հեռուստաընկերություն ՓԲԲ-ի Երևան ստուդիայի մասնաշենքի 1-ին հարկի վերակառուցում և վերահատակազծում/ք.Երևան Նորք Մարաշ Գ.Հովսեփյան փողոցի 26 հասցեում/

Перепланировка и реконструкция первого этажа корпуса "Ереван студии"
ЗАО "Общественного Телевидения Армении",
по адресу г.Ереван, Норк Мараш ул.Г.Овсепяна 26

Աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվ
Сводка объемов работ со сметой

No	Աշխատանքի անվանումը Наименование работы	Չ/Մ Ед. изм	Ծավալը Объем	միավորի արժեք հազ. դրամ стоимость единицы	արժեք հազ. դրամ стоимость	տեսակ Կշիռ %	
1	2	3	4	5	6	7	8
Քանդման աշխատանքներ Разборочные работы							
1	46--122	Փայտյա պատուհանների ապամոնտաժում /վերադարձ/	մ2մ ²	2.30	2.00	4.60	

2	46--124	Փայտե դռների ապամոնտաժում /վերադարձ/ Демонтаж /возврат/ деревянных дверей	մ ²	19.35	2.00	38.70
3	9--34	Մետաղական դարպասների ապամոնտաժում/վերադարձ/ Демонтаж /возврат/ металлических ворот	մ ²	64.80	7.00	453.60
4	9--37	Ալյումինե դռների, պատուհանների, վիտրաժների ապամոնտաժում/վերադարձ/ Демонтаж /возврат/ алюминиевых дверей окон витражей	մ ²	15.00	2.00	30.00
5	46--82	Ե/բ ծածկի և աստիճանների քանդում ж/б перекрытия и лестниц	մ ³	20.21	20.00	404.20
6	46--88	Բետոնե բլոկներից միջնորմների քանդում 200մմ հաստ ներառյալ բացվածքների քանդումը Снос перегородок из бетонных блоков толщиной 200мм, включая снос проемов	մ ³	59.22	15.00	888.30
7	46--40	Պատերում քանդում բացվածքների համար Продельвание проемов в стенах	մ ³	6.78	20.00	135.60
8	49-99	Բետոնյա շերտի քանդում ցեմենտե հարթեցնող շերտի հետ միասին разборка бетонного слоя с цем.стяжкой	մ ³	30.36	15.00	455.40
9	46--103	Լամինատե հատակների քանդում разборка полов из ламината	մ ²	26.00	0.50	13.00
10	ռ11--80	Պատերի վրայից ներկի քերում Соскоб краски со стен	մ ²	665.82	0.50	332.91
11	ռ11--228	Պատերի վրայից սվաղի քանդում Снятие штукатурки со стен	մ ²	1221.00	0.80	976.80
12	1-1587	Էքսկավատորով շինարարական աղբի բարձում ավտոինքնաթափերի վրա 0,65խոր.մ շերտափ տարողությամբ погрузка строительного мусора на самосвалы экскаватором объемом ковша 0,65 кв.м.	1000 մ ³	0.24	1000.00	240.00
13	С310-7	Շին աղբի տեղափոխում 7կմ 240*1,8 Перевозка строительного мусора 7 км 240*1,8	տ ս	432.00	1.50	648.00
14	1-1605	Աշխատանք աղբակույտի վրա Работа на свалке	1000մ ³	0.24	200.00	48.00
15	9--179 կիրառ	Գոյություն ունեցող Սարքավորումների ապամոնտաժում Демонтаж существующего оборудования	տ ս	6.00	90.00	540.00
16	СНП 4նաս,էջ5 աղ1տող 30 /կիրառ/ /կիրառ/	Բարձում ա/ի վրա Погрузка на а/маш	տ ս	6.00	10.00	60.00
17	310-1	Տեղափոխում մինչ- 1կմ /500մ/ перевозка на 500м	տ ս	6.00	5.00	30.00
18	СНП 4նաս,էջ5 աղ1տող 30 /կիրառ/ /կիրառ/	Բեռնաթափում разгрузка	տ ս	6.00	10.00	60.00
Ընամեն Qandman ashxatanqner						5359.110

		Ընդամենը Итого տեսակարար կշիռ տոկոս				4.73
		Շինարարական աշխատանքներ строительные работы				
		Հիմքեր Պատեր - Մնջնորմներ Стены и перегородки				
1	6--14	Միջնորմների տակ բետոնե В15 դասի հիմքերի իրականացում Выполнение бетонных фундаментов под перегородками	м ³ մ ³	20.55	40.00	822.00
2	8--140	Պատի շարք 40սմ հաստ բետոնե բլոկները 20*40*20 кладка стен толщ40см из бетонных блоков 20*20*40 см	м ³ մ ³	51.10	40.00	2044.00
3	8-150	Անցքերի լցափակում թեթ- բետոնով В 15դասի Заполнение дыр легким бетоном В 15 класса	м ³ մ ³	51.10	0.50	25.55
4		5Вр -1 ցանցի արժեքը Стоимость арм 6А-1с	т ւո	0.1363	1000.00	136.30
5		12А-500с դասի ամրանի արժեքը Стоимость арм 12А-500с класса	т ւո	0.496	500.00	248.20
6	6--83	Միջադիր էլեմենտների տեղադրում/շերտապողպատ/ Установка закладных элементов	т ւո	0.119	600.00	71.28
7	6--170	Ե/բ բարավորների իրականացում В15դասի բետոնով ж/б перемычки из бетона В15	м ³ մ ³	0.190	200.00	38.00
8		6Ас-1 դասի ամրանի արժեքը Стоимость арм 6Ас-1 класса	т ւո	0.0029	600.00	1.74
9		12А-500с դասի ամրանի արժեքը Стоимость арм12А-500с класса	т ւո	0.0082	500.00	4.10
10	6--168	Ե/բ գոտի բարավորների իրականացում В15դասի բետոնով ж/б пояс перемычки бетона В15	м ³ մ ³	1.080	200.00	216.00
11		6Ас-1 դասի ամրանի արժեքը Стоимость арм 6Ас-1 класса	т ւո	0.018	600.00	10.86
12		12А-500с դասի ամրանի արժեքը Стоимость арм 12А-500с класса	т ւո	0.048	500.00	23.95
13	8--140	Բետոնե բլոկները միջնորմների իրականացում 20*20*40սմ Устройство перегородок толщиной 20см из бетонных блоков 20*20*40 см	м ³ մ ³	35.10	40.00	1404.00
14	8-150	Անցքերի լցափակում թեթ- բետոնով В 15դասի Заполнение дыр легким бетоном В 15 класса	м ³ մ ³	35.10	0.50	17.55
15		5Вр -1 ցանցի արժեքը Стоимость арм 6А-1с	т ւո	0.39	1000.00	386.60
16		12А-500с դասի ամրանի արժեքը Стоимость арм 12А-500с класса	т ւո	0.14	500.00	71.05
17	6--83	Միջադիր էլեմենտների տեղադրում Установка закладных элементов	т ւո	0.08	600.00	47.52
18	6--170	Ե/բ բարավորների իրականացում В15դասի բետոնով ж/б перемычки бетон В15	м ³ մ ³	0.20	200.00	40.00
		6Ас-1 դասի ամրանի արժեքը	т ւո	0.0044	600.00	2.64

20		12A-500с դասի ամրանի արժեքը Стоимость арм 12A-500с класса	т ւո	0.017	500.000	8.70
21	8--169	Միջնորմների իրականացում 10սմ հաստ Բետոնե բլոկները 10*20*40սմ Выполнение перегородок толщиной 10см из бетонных блоков 10*20*40 см	մ2 մ ²	368.00	7.00	2576.00
22	8-150	Անցքերի լցափակում թեթ- բետոնով В 15դասի Заполнение дыр легким бетоном В 15 класса	մ3 մ ³	36.80	0.50	18.40
23		6A-1с դասի ամրանի արժեքը Стоимость армирования 6A-1с	т ւո	0.17	600.00	99.12
24		10A-500с դասի ամրանի արժեքը Стоимость армирования 12A-500с класса	т ւո	0.25	600.00	148.08
25	6-83	Միջադիր էլեմենտների տեղադրում Установка закладных элементов	т ւո	0.42	600.00	249.90
26	6--170	Ե/բ բարավորների իրականացում В15դասի բետոնով ж/б переемычки бетон В15	մ3 մ ³	0.03	200.00	6.00
27		6Ac-I դասի ամրանի արժեքը Стоимость армирования 6Ac-I класса	т ւո	0.0004	600.00	0.24
28		12A-500с դասի ամրանի արժեքը Стоимость армируры 12A-500с класса	т ւո	0.0025	500.00	1.25
29		Փրփրապլաստ 20մմ հաստը пенопласт 20мм толщ.	մ2 մ ²	30.00	2.00	60.00
30		Ջերմամեկուսացում պենոպլաստով теплоизоляция пенопластом	մ2 մ ²	93.90	3.00	281.70
		Նոր բացվող բացվածքների ուժեղացում Крепление вновь открываемых проемов				0.00
31	46--190 46--206	Պատերի մեջ անցքերի գայլիկնում d-30մմ L-300մմ устройство г отверстий в стенах d-30мм L-300мм	հատ	80.00	1.00	80.00
32	46-15	Բացվածքների ամրացում մետաղական շրջանակներով /ամրանից, ցանց, անկյունակներից,- Усиление проемов металлическими рамами /из арматуры,сетки, угольников,полосовой стали/	т ւո	1.32	300.00	396.60
33		12Ac-1 դասի ամրանի արժեքը Стоимость армирования 12Ac-1 класса	т ւո	0.04	500.00	17.50
34		Անկյունակ 100*10մմ Уголок 100*10мм	գծ.մ	76.00	6.50	494.00
35		Շերտապողպատ 50*4մմ Полосовая сталь 50*4мм	т ւո	1.13	100.00	112.90
36	35-37-57	Անցքերի ներարկում պոլիմեր - ցեմենտե շաղախով Инъекция отверстий полимерцементным раствором	մ3մ ³	0.82	30.00	24.60
37	46-15	Սյուների ամրացում մետաղական շրջանակներով /ամրանի ցանց անկյունակներից,- Усиление колонн металлической обоймой/ар-ная сетка,	т ւո	1.85	300.00	555.00

38		Անկյունակ 80*7մմ Угольник 80*7мм	գծ.մ	155.20	4.00	620.80
39		Շերտապողպատ 50*4մմ полос. Сталь 50*4мм	տ տ	0.51	100.00	50.94
40		Ցանց Վռ-4 сетка Вр-4	մ ² մ ²	76.00	3.00	228.00
41	15--256	Սյուների սվաղում ցեմենտային շաղախով լարային ցանցի վրայով ԿՏԿԱՏՐԱԿԱ ԿՈԼՈՆՆ ԿԵՄ.ՍԵՏԿ.Ր-ՐՈՄ ՍԵՏԿԵ	մ ² մ ²	76.00	5.00	380.00
		Պատուհաններ Окна				0.00
42		Այլումինե բլոկով 60մմ պրոֆիլից ջերմակամրջակով երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/բացվող Алюминиевым блоком, толщ.60мм, стеклопакетом, тепломостиком 4+4мм, цветные открываемые	մ ² մ ²	11.70	120.00	1404.00
43		Այլումինե բլոկով 60մմ պրոֆիլից ջերմակամրջակով երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ /չբացվող Алюминиевым блоком, толщ.60мм, стеклопакетом, тепломостиком 4+4мм, цветные не открываемые	մ ² մ ²	33.48	100.00	3348.00
44		Այլումինե բլոկով 60մմ պրոֆիլից երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ /բացվող Алюминиевым блоком, толщ.60мм, стеклопакетом 4+4мм, цветные открываем	մ ² մ ²	1.80	300.00	540.00
45		Այլումինե բլոկով 60մմ պրոֆիլից երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ /չբացվող Алюминиевым блоком, толщ.60мм, стеклопакетом 4+4мм, цветные не открываем	մ ² մ ²	9.86	60.00	591.60
46		Այլումինե բլոկով 60մմ պրոֆիլից ձայնամեկուսացումով երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ /չբացվող Алюминиевым блоком, звукоизоляцией толщ.60мм, стеклопакетом 4+4мм, цветные не открываем	մ ² մ ²	2.25	80.00	180.00
47		Մետաղապլաստե բլոկով 60մմ պրոֆիլից ջերմակամրջակով երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/բացվող Окно Металлопловостовым блоком, толщ.60мм, стеклопакетом, тепломостиком, 4+4мм, белые открываемые	մ ² մ ²	7.11	100.00	711.00

48		Մետաղապլաստե բլոկով 60սմ պրոֆիլից ջերմակամրջակով երկտակ ապակեփաթեթով պատուհանների տեղադրում /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ /չբացվող Окно Металлопловостовым блоком, толщ.60мм, стеклопакетом, теплоостиком, 4+4мм, белые не открываемые	մ ²	14.31	80.00	1144.80
49	10--103	Պատուհանագոգի իրականացում պլաստմասսե կոնստրուկցիայով, b=400սմ установка пластмассовых подоконников b=400мм	մ ² բացված ք проема	41.035	6.00	246.21
50		Պլաստմասե պատուհանագոգեր 0,40սմ հաստ пластмассовые подоконники	գծ.մմ	30.36	5.00	151.80
		Դռներ Դвери				0.00
51		Այլումինե եռաշերտ ձայնամեկուսիչ ապակեփաթեթով գունավոր միափեղկ/տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, трехслойные, звукоизоляционным стеклопакетом, цветные, одностворчатые двери	մ ² մ ²	32.13	120.00	3855.60
52		Այլումինե եռաշերտ ձայնամեկուսիչ խով գունավոր միափեղկ/տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, трехслойные, звукоизоляционным глухая, цветные, одностворчатые двери	մ ² մ ²	7.77	110.00	854.70
53		Այլումինե ,ապակեփաթեթով գունավոր միափեղկ/տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, глухая, цветные, одностворчатые двери	մ ² մ ²	6.72	100.00	672.00
54		Այլումինե ջերմամեկուսիչով երկշերտ ապակեփաթեթով գունավորկ/տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, стеклопакетом, цветные, двухслойные, двухстворчатые теплоостиком двери	մ ² մ ²	3.36	120.00	403.20
55		Այլումինե ջերմամեկուսիչով ձայնամեկուսացումով եռաշերտ ապակեփաթեթով գունավորկ/տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, глухие, цветные, трехслойные , двухстворчатые теплоостиком и звукоизоляции двери	մ ² մ ²	3.36	120.00	403.20
56		Այլումինե ,ապակեփաթեթով գունավոր երկփեղկ բացվող մաս /տեղափոխումը – տեղադրումը ներառված է գնի մեջ/Алюминиевые, стеклопакетом, цветные, двухстворчатые двери открываемые	մ ² մ ²	7.12	110.00	783.20
57		Այլումինե ,ապակեփաթեթով գունավոր երկփեղկ չբացվող մաս /տեղափոխումը – տեղադրումը	մ ² մ ²	2.07	100.00	207.00

		стеклопакетом, цветные, двухстворчатые двери не открываемые				
58		Արգելափակիչներ ограничители	հատ	7.00	3.00	21.00
		Հատակներ Полы				0.00
59	11--3, 11--5	հատակների տակ ավազակոպճային լիցք իրականացում տոփանումով насыпь под полы гравийнопесчаным грунтом с трамбовкой	մ ³ մ ³	259.57	8.00	2076.56
60	11--11	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում 10սմ հաստ подгототительный слой из бетона 10см толщ.	մ ³ մ ³	46.52	70.00	3256.05
61	6--86	Հարթեցնող շերտի ամրանավորում армирование подгототительного слоя	տ Կ	1.88	500.00	941.00
62	11--55-	Հատակի տակ հարթեցնող շերտի իրականացում ցեմենտի շաղախով միջ. 30սմ հաստությամբ Выравнивающий слой из цем. песчан. р-ра 30мм толщ.	մ ² մ ²	607.15	3.00	1821.45
63	11--18	Միաշերտ ջրամեկուսացում իզոգամով гидроизоляция изогамом	մ ² մ ²	16.40	4.00	65.60
64	11--198 կիրառ	Լամինատե հատակի իրականացում սպունգի – սուսինձի հետ միասին 10սմ հաստ устройство полов из ламината в том числе плинтус и клей	մ ² մ ²	98.00	15.00	1470.00
65	11--135	Պրեսգրանիտե սալիկներով հատակի իրականացում устройство полов из пресгранита	մ ² մ ²	341.40	14.00	4779.60
66	11-252	Շրեշակների իրականացում լավորակ պրեսգրանիտե սալիկներով h-10սմ плинтусы из пресгранита 10см	100 գծ.մ մ	4.26	150.00	639.00
67	11--99	Էպոքսիդե հատակ ռետինե հիմքով չփայլող հարթ ս- միատարր մակեր-վույթ առանց կցակարերի առնվազն 1սմ հաստ устройство эпоксидных полов 1см толщ. Без швов	մ ² մ ²	123.25	10.00	1232.50
		Սերվերայինի Հատակներ /կեղծ/ Фальш пол в серверной				0.00
68	9--124	Սերվերային հատակի կարկասի մոնտաժում монтаж каркаса металлического	Կ տ	0.18	300.00	54.30
69	Շալկուլյացի ա калькуляция 1	Սերվերի կեղծ հատակի և կանալ արժեքը стоимость фальш пола и канала	մ ² մ ²	8.60	5.00	43.00
70	15--614	Մետաղական տարրերի յուղաներկում окраска металлических элементов	մ ² մ ²	10.40	1.50	15.60
71	6--1	Բետոնե միաձույլ կանալի իրականացում устройство Бетонных каналов	մ ³ մ ³	0.78	100.00	78.00
72	11--197	ՓՏՍ սալերով սերվերայինի կեղծ հատակի 7և կանալի ծածկույթի իրականացում устройство покрытия ДСП плитами фальш пола серверной и канала	մ ² մ ²	12.50	6.00	75.00
73	11--205	Վինիլային հատակի իրականացում լավորակ устройство виниловых полов	մ ² մ ²	44.50	15.00	667.50

		<i>Ներքին հարդարման աշխատանքներ внутренние отделочные работы</i>				0.00
74	n11--64	Առաստաղի գաջի սվաղի նորոգում ремонт гажевой штукатурки потолков	m2 մ ²	123.25	4.00	493.00
75	n11--57	Պատերի գաջի սվաղի նորոգում ремонт гажевой штукатурки стен	m2մ ²	39.90	4.00	159.60
76	15--246-1	Պատերի – սյուների լավորակ սվաղ գաջով гажевая штукатурка стен и колонн	m2մ ²	1552.2 7	3.00	4656.81
